Մարզպետական եկամուտներ-2008

Գեւորգ Հայրապետյան

2009թ.-ի հոկտեմբերին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը ՀՀ Պետական եկամուտների կոմիտեից ստացավ ՀՀ բոլոր մարզպետների 2008թ.-ի գույքի եւ եկամուտների հայտարարագրերում ներառված տվյալների մասին տեղեկանքները: Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանը 2008թ.-ի ընթացքում զբաղեցրել է Արագածոտնի մարզպետի տեղակալի պաշտոնը, ուստի գույքի եւ եկամուտների հայտարարագիր ներկայացրել է այդ պաշտոնը զբաղեցնելու ժամանակ ստացած եկամուտների վերաբերյալ:

2008թ.-ին գույքի եւ եկամուտների հայտարարագրեր ներկայացրած 10 մարզպետներից միայն 2-ն են 2008թ.-ի ընթացքում օտարել կամ ձեռք բերել որեւէ գույք, այն էլ՝ միայն անշարժ գույք: Շիրակի մարզպետ Լիդա Նանյանը ձեռք է բերել 1 հողամաս եւ 6 շենք եւ շինություն, օտարել է 2 շենք եւ շինություն: Վայոց Ձորի մարզպետ Վարդգես Մաթեւոսյանը ձեռք է բերել 2 շենք եւ շինություն՝ փոխարենը ոչինչ ձեռք չբերելով:

2008թ.-ի ընթացքում գույքով եւ արտարժույթով եկամուտ ունեցել է միայն Շիրակի մարզպետ Լիդա Նանյանը: Արտարժույթով եկամուտը կազմում է 78 ԱՄՆ դոլար, իսկ գույքով եկամուտի արժողությունը 7.620.000 ՀՀ դրամ է:

2008թ.-ին ընթացքում ամենաշատ եկամուտը ստացել է Լոռու մարզպետ Արամ Քոչարյանը, ում եկամուտը կազմել է 35.070.600 դրամ: Արամ Քոչարյանի եկամուտը մոտ 17 անգամ ավելի է, քան մարզպետների շրջանում 2008թ.-ի ընթացքում ամենաքիչ եկամուտն ունեցած Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանի ցուցանիշն է 2.074.713 դրամ եւ 2 անգամ ավելի, քան 2008թ.-ին ամենաշատ եկամուտը ստացած նախարարներից երկրորդի՝ Շիրակի մարզպետ Լիդա Նանյանի ցուցանիշն է (16.401.983 դրամ՝ ներառյալ գույքով ստացած եկամուտը): Լոռու մարզպետ Արամ Քոչարյանին հաջորդում է Շիրակի մարզպետ Լիդա Նանյանը՝ 16.401.983 դրամ եկամուտով:

2008թ.-ին ամենաքիչ եկամուտն ունեցել է Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանը: 2008թ.-ին պաշտոնավարելով որպես Արագածոտնի մարզպետի տեղակալ՝ Սարգիս Սահակյանը ունեցել է 2.074.713 դրամ եկամուտ:

Մնացած բոլոր մարզպետներից յուրաքանչյուրի եկամուտների չափը չի գերազանցում 3 մլն դրամը: ՀՀ բոլոր մարզպետները միասին 2008թ.-ի ընթացքում ունեցել են 71.310.636 դրամ (որից 7.620.000 դրամ գույքով) եւ 78 ԱՄՆ դոլար եկամուտ:

Համեմատության համար միայն նշեմ, որ բոլոր մարզպետների եկամուտները միասին վերցրած ավելի քան 5 անգամ քիչ են քան 2008թ.-ին նախարարների շրջանում ամենաշատ եկամուտը ստացած Առողջապահության նախարար Հարություն Քուշկյանի ստացած եկամուտից (381.607.396 դրամ):

Հ/Հ	Մարզպետը	Եկամուտը	Օտարել է	Ձեռք է բերել
1.	Արարատի մարզպետ Վարդգես Հովակիմյան	2.850.928	_____	_____
2.	Տավուշի մարզպետ Արմեն Ղուլարյան	2.270.160	_____	_____
3.	Կոտայքի մարզպետ Կովալենկո Շահգալդյան	2.407.058	_____	_____
4.	Վայոց Ձորի մարզպետ Վարդգես Մաթեւոսյան	2.337.400	_____	Շենք եւ շինություն, շենք եւ շինություն
5.	Շիրակի մարզպետ Լիդա Նանյան	8.781.983/78 ԱՄՆ դոլար /7.620.000 գույքով	Հողամաս, Շենք եւ շինություն, շենք եւ շինություն, շենք եւ շինություն, շենք եւ շինություն, շենք եւ շինություն, շենք եւ շինություն	Շենք եւ շինություն, շենք եւ շինություն
6.	Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյան	2.747.794	_____	_____
7.	Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյան	2.268.000	_____	_____
8.	Գեղարքունիքի մարզպետ Նվեր Պողոսյան	2.882.000	_____	_____

9.	Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյան	2.074.713	_____	_____
10.	Լոռու մարզպետ Արամ Քոչարյան	35.070.600	_____	_____